ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3321 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի Հ. 1506-Ա ՈՐՈՇՄԱՆ Հ. 15-ՐԴ ԿԵՏԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 4 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐ ՍՈՒՐԻԿԻ ՊԱՆԴԵՅԱՆԻ, ԱՎԵՏԻՔ ՍՈՒՐԻԿԻ ՊԱՆԴԵՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍՈՒՐԻԿԻ ԼԵՑՑԵԼԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 297.12ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գոհար Սուրիկի Պանդեյանի (ծնված 05.06.1954թ.), Ավետիք Սուրիկի Պանդեյանի (ծնված 14.10.1960թ.), Նարինե Սուրիկի Լեւոցելի (ծնված 22.05.1958թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.4 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1437.12քմ, որից Գոհար Սուրիկի Պանդեյանին, Ավետիք Սուրիկի Պանդեյանին, Նարինե Սուրիկի Լեւոցելին սեփականության իրավունքով պատկանում է 840քմ մակերեսով հողամաս: Օրինական հողամասին կից օգտագործվող 597.12քմ մակերեսով հողամասից օրենքի ուժով 300քմ մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 297.12քմ մակերեսով հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի միջոցով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 01.06.2007թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 15.02.2005թ. հ.1424, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 07.04.2009թ. հ.20/2-Ե/189 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 30.01.2009թ. հ.20-Ել-580 եզրակացությունը, համաձայն որի Շահումյան 7-րդ փողոցի 1ին նրբանցքի հ.4 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Չեղյալ ճանաչել Երևանի քաղաքապետի 2005 թվականի հուլիսի 12-ի հ.1506-Ա որոշման հ.15-րդ կետը:

2. Վերականգնել Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.4 հասցեում Գոհար Սուրիկի Պանդեյանի, Ավետիք Սուրիկի Պանդեյանի, Նարինե Սուրիկի Լետցելի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 840քմ մակերեսով հողամասին կից 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 597.12քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 300քմ մակերեսով հողամասից ավել օգտագործվող 297.12քմ մակերեսով հողամասը տարածագնահատման 7-րդ գոտու կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գոհար Սուրիկի Պանդեյանին, Ավետիք Սուրիկի Պանդեյանին, Նարինե Սուրիկի Լետցելին:

4. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողների հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից:

6. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

7. Շահումյան 7-րդ փողոցի 1ին նրբանցքի հ.4 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Շահումյան 7-րդ փողոցի 1ին նրբանցքի հ.4 տուն>>:

8. Նախազգուշացնել հողօգտագործողներին, որ հողամասի առուվաճառքի պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

9. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գոհար Սուրիկի Պանդեյանի, Ավետիք Սուրիկի Պանդեյանի, Նարինե Սուրիկի Լետցելի սեփականության իրավունքը սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

10. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան:

11. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

12. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ